

ՄԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Վ. Ե. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսությունը բազմակացությամբ և է, որտեղ առկա են սեփականության գրեթե բոլոր ձևերը: Տնտեսական և սոցիալական գործընթացների շուկայական կարգավորման կարևորագույն մախարդյալը սեփականության պետական մենաշնորհային ձևի վերացումն է¹: Պետական սեփականության ապակենտրոնացումը ստեղծում է տնտեսական հարաբերությունների նոր ձև, որն ապահովում է սեփականության անձեռնմխելիություն և տնտեսավարման բոլոր ձևերի ազատություն ու հավասարություն: Մակայն հարց է ծագում՝ ինչպես կազմակերպել ապապետականացումը և սեփականաշնորհումը: Հարցի ամբողջ բարդությունն այն է, որ մի կողմից՝ անհրաժեշտ էր սեփականաշնորհել պետական ֆոնդերի ամբողջական 60-70%-ը, որոնց հաշվեկշռային արժեքները կազմում էին միլիարդավոր ուլտիներ, մյուս կողմից՝ այն պայմանավորում է սոցիալական հարաբերությունների արմատական փոփոխություններ:

Տնտեսագիտական գրականության մեջ սեփականաշնորհման իրականացման երեք հիմնական ուղղություններ են նշվում²: Առաջին՝ պետական սեփականության անվճար հանձնումը աշխատավոր կոլեկտիվներին: Երկրորդ՝ պետական սեփականության վաճառքը և վարձակալության հանձնումը: Երրորդ՝ պետական կապիտալի բաժանումը հասարակության բոլոր անդամների միջև կամ հավասարաչափ սկզբունքով, կամ որոշակի գործակցի միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի ներդրումը պետական ունեցվածքի մեջ՝ ըստ նրա աշխատանքային ստաժի: Հայաստանի Հանրապետությունը նախընտրեց երկրորդ ուղղությունը, սակայն դա չի նշանակում, որ այն չպետք է զարգանա և կատարելագործվի իր մեխանիզմով, ձևերով և մեթոդներով:

Անցումն ազատ շուկայական հարաբերություններին բնականաբար ենթադրում է սեփականաշնորհման գործընթացի կատարելագործում, սեփականաշնորհման այնպիսի նոր, կատարյալ մեխանիզմի ստեղծում, որը կապահովի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացում: Սեփականաշնորհման գործընթացի կատարելագործումից է կախված նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, գործազրկության կրճատումը, բնակչության եկամուտների աճը և ընդհանրապես բնակչության կենսամակարդակի բարձրացումը և բարեկեցության աճը:

2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում սեփականաշնորհված է 1514 ձեռնարկություն, որոնցից 1047-ը՝ բաց բաժնետիրական ընկերությունների տեսքով: Ըստ ՀՀ սեփականաշնորհման մախարարության տվյալների, ընդհանուր առմամբ վճարվել է 100830373,6 հազ. դրամ, որից 39766020 հազարը՝ սերտիֆիկատով (39,4%-ը) և 61064353,6 հազարը՝ դրամով: Ընդ որում, 1999թ. սեփականաշնորհված կազմակերպությունների համար վճարվել է ընդամենը 17613488,9 հազ. դրամ³: Ինքնին խոսում է այն փաստը, որ կաշառակերության ու համատարած թալանի արդյունքում, համաձայն պաշտոնապես հրապարակված տարբեր աղբյուրների տվյալների, միայն 800.000 ԱՄՆ դոլարով «սեփականաշնորհվել է» հանրապետության տնտեսության կեսից ավելին, ավելի ճիշտ՝ 55%-ը:

¹ Տե՛ս Դ. Բախանյան, Ա. Կոստանյան, «Разгосударствление и демонополизация экономики. – “Экономические науки”, М., 1991, N 8, էջ 128:

² Տե՛ս նույն տեղը, էջ 129-130:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 1999 թվականի հունվար-դեկտեմբեր», Երևան, 2000, էջ 95:

Հատկանշական է, որ պետության կողմից առանց ձեռնարկությունների վերագործարկման ժամկետների սահմանման և անհրաժեշտ հսկողության բացակայության պայմաններում իրենց իրական արժեքներից հազարապատիկ ցածր գնահատված արդյունաբերական օբյեկտների նոր տերերին ավելի ձեռնտու էր մտահոգվել ոչ այնքան ոչնչով չպարտադրված վերագործարկմամբ ու արդյունքի ստեղծմամբ, որքան ձեռնարկությունում առկա արտադրության միջոցների ավելի բարձր գներով, ավելի ձեռնտու պայմաններով վերավաճառքի մասին: Ընդհանրապես՝ «ճեքքին կարգով» կամ էլ խորհրդանշական գնով օբյեկտների վաճառքը հիմնականում իրականացվել է ոչ մրցութային կարգով: Այսպես 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գնահատվել են 8204 «փոքր» օբյեկտներ, որոնցից 1994-99 թթ. սեփականաշնորհվել է 6806-ը կամ 83,0%-ը, այդ թվում աճուրդով՝ ընդամենը 280 օբյեկտ, որը կազմում է ընդհանուր սեփականաշնորհվածի 4,7%-ը⁴:

Սեփականաշնորհման գործընթացում հաշվի չեն առնվել այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են ձեռնարկության մասնագիտացման պահպանումը, նրա ինտեգրացումը ազգային տնտեսությանն ու սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսված գործընթացներին: Նման վտանգն ավելի մտահոգիչ է հատկապես հանքահումքային ոլորտի և պետական ռազմավարական օբյեկտների սեփականաշնորհման դեպքում:

Ընդհանրապես կարելի է նկատել, որ սեփականաշնորհման գործընթացը հանրապետությունում իրականացվել է տարերայնորեն, առանց սեփականաշնորհման իրատեսական ռազմավարական ծրագրի, առանց անհրաժեշտ հասարակական վերահսկողության: Այլ կերպ ասած՝ ներկայումս ստեղծված են սեփականաշնորհման օրենսդրական լավ կամ վատ տեսական հիմքեր, բայց չկա արդյունավետ և նպատակասլաց գործողության մեխանիզմ:

Բացարձակապես քննադատության չի դիմանում տնտեսության սեփականաշնորհման պետական ծրագիրը: Մինչև այսօր ոչ մի սեփականաշնորհված ձեռնարկություն ոչ մի օգնություն չի ստացել ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից: Հատկանշական է այն փաստը, որ արդյունաբերության և առևտրի նախարարությունն իր տրամադրության տակ չունի համապատասխան տնտեսական, ֆինանսական և նյութական լծակներ, որպեսզի կարողանա որոշակիորեն նպաստել սեփականաշնորհված ձեռնարկության զարգացմանը: Սեփականաշնորհված օբյեկտներն ամբողջությամբ գտնվում են բարձրորդի վիճակում և չի մշակված պետական որևէ ծրագիր դրանց աշխատանքը կառավարելու համար:

Կառավարությունը ոչ մի կերպ չի աջակցում և պաշտպանում ճեքքին արտադրողների շահերը: Չկան ոչ ընթացիկ և ոչ էլ հեռանկարային հովանավորչական ծրագրեր: Չկա իրական աշխատող ֆինանսական մեխանիզմ, որը համագործակցի ձեռնարկատերերի հետ, չի իրականացվում նաև ճեքքին և արտաքին շուկաների իրավիճակի մասշտաբային-հեռանկարային ուսումնասիրություն: Երկաթգծի շրջափակման պայմաններում կառավարությունը ոչ մի էական միջոցառում չի իրականացնում ներմուծման և արտահանման բնագավառներում իր արտադրողների տրանսպորտային ծախսերի իջեցման ուղղությամբ և այլն:

Սեփականաշնորհման գործընթացը կատարելագործելու և նրանում տեղ գտած բացթողմաները շտկելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ համալիր միջոցառումների ծրագիրը:

Ամբողջությամբ վերանայել հանրապետությունում գործող սեփականաշնորհման կարգը՝ մշակելով այնպիսի մեխանիզմ, որը կբացառի նախկինում թույլ տրված խախտումների կրկնման հավանականությունը: Այս նպատակով մեծացնել պետության կարգավորիչ և հասարակական վերահսկիչ դերը:

Մշակել հանրապետության տնտեսական զարգացման ծրագրից բխող սեփականաշնորհման նոր ծրագիր՝ ավելի շատ կիրառելով մրցութային կարգը, սեփականաշնորհվող օբյեկտների ցանկի մասին նախապես տեղեկացնել մերձավոր և հեռավոր Սփյուռքի գործարարներին:

Սեփականաշնորհվող օբյեկտները գնահատել անկախ փորձագետների օգնությամբ՝ հաշվի առնելով նրանց իրական արժեքը: Առանձին օբյեկտների գնահատման ժամանակ գնի մեջ ներառել նաև տվյալ ձեռնարկության ինժեներա-տեխնիկական անձնակազմի արժևորված գինը: Սեփականաշնորհումից ստացված միջոցները բացառապես օգտագործել ռազմավարական

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 96:

նշանակության այս կամ այն ճյուղի արտոնյալ զարգացման, նպատակային արտադրական ծրագրերի իրականացման, նոր տեխնոլոգիաների ձեռքբերման և նոր աշխատատեղերի ստեղծման նպատակներով: Սեփականաշնորհման գործարքներն առավել թափանցիկ դարձնելու նպատակով ապահովել աշխատողների մասնակցությունը գործերի կառավարման աշխատանքներին:

Օրինական գործարքներով սեփականաշնորհված, սակայն դեռևս չաշխատող օբյեկտների վերագործարկումը խթանելու և արագացնելու համար կառավարությունը պետք է որոշակի արտոնություններ սահմանի՝ կիրառելով արտադրության հիմնական միջոցներից և անշարժ գույքից գանձվող հարկերի զրոյական դրույքաչափ գործունեություն առաջին, իսկ առանձին դեպքերում՝ նաև երկրորդ և երրորդ տարիների համար: Չաշխատող ձեռնարկությունների արտադրության հիմնական միջոցներից և անշարժ գույքից սահմանի ժամանակային պրոդյուսիվ սանդղակով գանձվող գույքահարկ հետևյալ ձևով. արտադրության հիմնական միջոցներից՝ դրանց շուկայական արժեքի 50%-ի չափով՝ առաջին տարում, 75%-ի չափով՝ երկրորդ տարում և 100%-ի չափով՝ երրորդ տարում: Նշված միջոցառումների իրականացումը կհանգեցնի այն բանին, որ չաշխատող ձեռնարկությունների տնօրենները ստիպված կլինեն ընտրություն կատարել հետևյալ գործառնություններից. սեփական ուժերով վերագործարկել ձեռնարկությունը՝ ազատվելու տարեցտարի աճող հարկային պարտավորություններից և օգտվելու գույքահարկի վերը նշված արտոնություններից, վաճառել ձեռնարկությունը կամ վերադարձնել պետությանը՝ սեփականաշնորհման գործարքի համար վճարված անվանական գնով, վերագործարկման ծրագիր առաջարկել՝ պետության հետ համատեղ՝ նախատեսելով պետության բաժնեմասի տյուրանդում պետական պատվերի ստացման դիմաց, ձեռնարկությունը տալ վարձակալության և, վերջապես, հայտարարել սնանկ՝ գործող կարգի համաձայն:

Սեփականաշնորհված օբյեկտի կողմից օրինախախտումների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է չեղյալ համարել գործարքը և սեփականատիրոջից ետ ստանալ և պետությանը վերադարձնել սեփականաշնորհման արդյունքում ընդունման-հանձնման պահին արձանագրված ու գույքագրված ողջ ունեցվածքը՝ ներառյալ արտադրության հիմնական միջոցներն ու ինֆորմացիոն ողջ կապիտալը: Նախկին սեփականատիրոջից գանձել գույքի պակասող մասի շուկայական գնի համարժեքը և հայտարարել նոր մրցույթ տվյալ օբյեկտի սեփականաշնորհման համար: Մրցույթում նախապատվությունը տալ առավել կարճ ժամկետներում անհրաժեշտ մասնագիտական և արտադրական կարողության առավել արդյունավետ օգտագործմանը վերագործարկման հաշվարկներ պարունակող ծրագրերին:

Սեփականաշնորհման մեխանիզմի կատարելագործումը պահանջում է նաև կատարելագործել հարկային քաղաքականությունը: Վերջին ժամանակաշրջանում որդեգրված «կոշտ» հարկային քաղաքականության հետևանքով ոչ միայն կրճատվել են բյուջեի եկամուտները, այլև այն կանխարգելում է սեփականաշնորհված ձեռնարկությունների վերագործարկումը: Ներկայումս մանր ու միջին բիզնեսի քայքայման գլխավոր պատճառներից մեկը նույնպես «կոշտ» հարկային քաղաքականության իրականացումն է: Ներկա կառավարության գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի «փափուկ» հարկային քաղաքականության մշակումը և իրականացումը:

В. В. Овсепян - Некоторые вопросы совершенствования механизма приватизации. - На современном этапе развития рыночных отношений в Армении происходят некоторые изменения в сфере приватизации. В статье рассматривается приватизационная политика правительства РА за последние несколько лет и, основываясь на привлеченных фактах, она характеризуется как социально-несправедливое и коррупционное явление.

Автор статьи одновременно указывает на пути и средства совершенствования механизма приватизации в экономике республики.